ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՆԴ» ՊՈԱԿ

ՀՐԱՄԱՆ

ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«16» փետրվարի 2021 թ. N 4-Լ

Ղեկավարվելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի հունիսի 30-ի N 47-Լ հրամանով հաստատված «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի կանոնադրության (նոր խմբագրությամբ) 25-րդ կետի «ժա» ենթակետով, հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի փետրվարի 15-ի N 08-Լ հրամանի 1-ին կետի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի դրույթները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատողների լրավճարների և պարգևատրումների վճարների կազմավորման և տրման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի մասին սահմանված կարգով ծանուցել կազմակերպության աշխատողներին:

Տնօրեն՝ Հ. Մովսիսյան

Հավելված
«Հանրապետական երկրաբանական ֆոնդ»
ՊՈԱԿ-ի տնօրենի
«16» փետրվար 2021թ.
N 4-Ա հրամանի

ԿԱՐԳ
«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՆԴ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՏՐՄԱՆ

1. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատանքների վարձատրությանն ուղղված ֆինանսական միջոցները կազմավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված տրանսֆերտներից և կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության ընթացքում մատուցված ծառայությունների դիմաց վճարվող գումարներից:
2. Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցները բաշխվում են աշխատողներին երեք բաղադրամասով.
   - 1-ին մաս՝ հաստատված հաստիքացուցակով սահմանված հաստիքային միավորին և պաշտոնային դրույքաչափին համապատասխան հաշվարկված ամսական աշխատավարձ,
   - 2-րդ մաս՝ լրավճար,
   - 3-րդ մաս՝ պարգևատրման վճար:
3. Լրացուցիչ աշխատավարձի՝ լրավճարի և պարգևատրումի տրման համար հիմնավորող ցուցանիշներն են «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատողների կողմից աշխատանքների, հանձնարարականների և առաջադրանքների ժամանակին և որակյալ կատարումը, ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը:
4. Տնօրենը լրացուցիչ աշխատավարձի չափի և հատկացման մասին որոշումը կայացնում է ելնելով սույն կարգի 3-րդ կետում նշված ցուցանիշների ապահովումից, կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ամսական և եռամսյակային արդյունքներից, ընթացիկ և տարեկան ֆինանսական վիճակից և ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի հոդվածների կատարումն ապահովելու պայմանից:
5. Կազմակերպության աշխատողների լրացուցիչ աշխատավարձի չափը չի կարող գերազանցել հաստատված հաստիքացուցակով սահմանված ամսական աշխատավարձի չափը:
6. Կազմակերպության աշխատողներին լրավճարները կարող են տրվել ամսական, իսկ պարգևատրումները՝ եռամսյակային պարբերականությամբ:
7. Լրացուցիչ աշխատավարձերը կազմավորվում և տրվում են տնօրենի հրամանով: